



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 12 ՅՈՒՆԻՍ, 2017

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 41

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԳՏԱԾ ՄԱՐԴՈՒՆ ԱՂԹԹՔԸ

Երանի անոր, որ թշուառին հոգ կը փանի.  
նեղութեան ժամանակ Տէրը վայն պիտի ապարէ:  
Տէրը պիտի պահպանէ վայն, անոր կեանքը պիտի երկարէ,  
վայն երանելի պիտի դարձնէ այս աշխարհի մէջ,  
եւ վայն պիտի չձգէ թշնամիներու քմահաճոյքին:  
Տէրը պիտի օգնէ անոր, հիւանդ պառկած ժամանակ,  
եւ իր հիւանդութենէն զինք պիտի ապաքինէ:  
Ես Տիրոջ ըսի. «Ողորմէ ինձի, Տէր.  
բժշկէ զիս, ես քեզի դէմ մեղանչեցի»:  
Թշնամիներս չարակամութեամբ կ'ըսեն.  
«Ե՞րբ պիտի մեռնի, եւ անունն իսկ չլիջուի»:  
Ով որ ինձի տեսութեան կու գայ՝ կեղծ-կեղծ խօսքեր կը խօսի,  
բամբասանքի նիւթ կը ժողվէ, դուրս ելլելով՝ կը փարածէ:  
Բոլոր անոնք որ զիս կ'ապրեն՝ կը հաւաքուին,  
եւ չար վախճանս կ'երեւակայեն փսփսալով իրարու.  
«Ջարագուշակ հիւանդութեան բռնուած է.  
անկողինին գամուած է, եւ ալ բնաւ ոտքի չ'ելլեր»:  
Նոյնիսկ ամենէն մտերիմ ընկերս, որուն կը վստահեի,  
եւ որ ինձի սեղանակից կ'ըլլար միշտ,  
ան ալ ինձի դաւաճանեց:  
Բայց դուն, ով Տէր, ողորմէ ինձի,  
ոտքի հանէ զիս, եր ես անոնց փոխարէնը հապուցանեմ:  
Թշնամիներս թող չկարենան յաղթանակ փանիլ իմ վրաս,  
եւ ապով գիտնամ՝ թէ կը հաւնիս զիս:  
Բայց դուն արդէն զիս կ'ընդունիս՝ անմեղութեանս համար,  
եւ յաւիտեան զիս կը պահես քու ներկայութեանդ մէջ:  
Օրհնեալ է Տէրը, Աստուածը իր ժողովուրդին,  
յաւիտեանէ մինչեւ յաւիտեան: Ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՐՈԹՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**  
**Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:**  
**Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:**  
**Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւնս ես նեղերոց:**  
**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

**Պահապան ամենայնի Քրիստոս,**  
*աջ քո հոգևոր լիցի ի վերայ իմ՝ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նախապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՆ ԵՎ ՄԱՐԿՈՍ

1:10-16

## ՄԱՐԿԱՐԵՆԵՐՈՒՆ ՅԱՅՏՆՈՒՄԾ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ՝ ՔՐԻՍՏՈՍՈՎ (1:10-12)

Փորձուած հաւաքք, որ պիտի արժանանայ Յիսուս Քրիստոսի կողմէ գնահատանքի, փառքի ու պարտի, եւ ունենալու այն անպարմելի ուրախութիւնը, որ մերը կ'ըլլայ երբ ընդունինք որպէս մեր հաւաքքին պատկուածը՝ հոգիներու փրկութիւնը:

Այս փրկութիւնը նոր չէ, անցեալի Աստուածաշնչական մարգարէները փնտռեցին ու փորձեցին հասկնալ, թէ ինչ ժամանակի եւ ինչ պարագաներ կը ծանուցանէր, որովհետեւ Աստուծոյ պատրաստած այդ փրկութիւնը գալիք ժամանակներուն համար էր: Անցեալի պարահամ դէպքերը շուքն էին գալիք ճշմարտութեան: Ուստի Հին Կրակարանեան դէպքերը ուրիշ բան չէին եթէ ոչ նախաճաշակ, որ հրամցուեցան անցեալին անով պատրաստելու եւ իր լրումին հասցնելու Յիսուս Քրիստոսով: Անոր համար ալ արժէ որ Հին Կրակարանեան պատումները այս պարագայով դիտել, կարդալ եւ ըստ այնմ հասկնալ: Գեղեցիկ է այն արտայայտութիւնը երբ պարարագի աւարտին այսպէս կ'ըսէ պարարագի եկեղեցական. «*Կարարումն Օրինաց եւ մարգարէից դու ես Քրիստոս Աստուած փրկիչ մեր, որ լցեր զամենայն հայրական տնօրինութիւնս քո լից եւ զմեզ հոգուով քով սրբով*»: Ուրեմն, անցեալին Աստուած ինչ պարգամեց մարգարէներուն Քրիստոսի չարչարանքներուն եւ գալիք փառքին մասին: Այդ չարչարանքները ուրիշ բան չեն եթէ ոչ մեր փրկութիւնը:

Ահա այդ հասկացողութեան լոյսի փակ է, որ Պօղոս Առաքեալ իր աշակերտին կ'ըսէ. «*մանկութենէդ գիտես սուրբ գիրքերը, որոնք զգրութիւն ունին քու միտքդ իմաստութեան բանալու՝ որպէսզի Քրիստոս Յիսուսի հաւատաս եւ փրկուիս*» (Բ Տիմ 3:16): Սա ցոյց կու տայ, թէ Հին Կրակարանեան պատումները կիրակնօրեայ դպրոցի հեքեաթներ չեն, եւ ոչ ալ պարզապէս հրեայ ժողովուրդի մը պարմութիւնն է, այլ՝ Աստուծոյ պատրաստած փրկութեան ծրագրին նախապարաստութիւնն են, որ իր լրումը գրաւ Յիսուս Քրիստոսի մարդեղացումով, Անոր խաչելութեամբ, թաղմամբ ու յարութեամբ: Ահա նոյն այդ դէպքերուն վերաքաղումը կարարեց Ինք Յիսուս Իր յարութենէն անմիջապէս յետոյ երբ հանդիպեցաւ Էմմաուսի ճամբորդներուն, անոնց պարմելով թէ ինչեր գրուած էին Հին Կրակարանին մէջ եւ որ այդ բոլորը պիտի կարարուէին. «*Այս սկսաւ բացատրել Սուրբ գիրքերուն մէջ իր մասին գրուած բոլոր գրութիւնները, սկսեալ Մովսէսի գիրքերէն մինչեւ բոլոր մարգարէութիւնները*» (Լուկ 24:27): Այս բոլորը ինչպէս կարելի էր, Քրիստոսի Հոգիով գրեցին, եւ Սուրբ Հոգիի մղումով փոխանցեցին: Օրինակ, ինչպէս Փիլիպպոս Եթովպիացիին պիտի բացատրէր Եսայի մարգարէն քաղումը այն հապուածը, որ կը ներկայացնէր Քրիստոսի մասին: Ծննդոց գիրքէն սկսեալ արդէն Աստուած ցոյց տուաւ այդ փրկութեան ծրագիրը, երբ Չարին դապապարտութիւնը տեղի կ'ունենար (Ծննդ 3:15): Հակառակ այն իրողութեան, որ այդ պարգամները նաեւ մարգարէներուն ժամանակակից պարգամներ էին, բայց նաեւ մոզայիքի խճաքարեր էին, քով քովի բերելու եւ ամբողջ պարկերը ամբողջացանելու: Ահա որքան երանելի ենք, երբ այսօր կ'աշակերտինք Քրիստոսի եւ մեր առջեւ կը պարզուի այդ ամբողջ, երբ անցեալի մարգարէները կը փորձէին հասկնալ այդ բոլորի իմաստը: Բայց Աստուած յայտնեց իրենց, թէ փոխանցուած այդ պարգամները իրենց ժամանակներուն համար չէին, այլ՝ գալիքին: Ուրեմն, ինչ էր Սուրբ Հոգիին դերը Հին Կրակարանեան ժամանակահատուածին, ուղղելու դէպի Քրիստոսը: Իսկ ինչ էր դերը Սուրբ Հոգիին Անոր գալուստէն յետոյ, որպէսզի աշակերտները, Եկեղեցին լեցուի Սուրբ Հոգիով եւ վկան դառնայ Քրիստոսի աշխարհի չորս ծագերուն:

## ՄՐԱՌԹԵԱՄԲ ԱՊՐԵԼՈՒԷ ԿՈՉ (1:13-16)

Ուրեմն ի՞նչ ընել: Պետրոս Առաքեալ կ'ըսէ. «*միտքով պատրաստ եւ արթուն եղէք, ձեր ամբողջ յոյսը կապած փրկութեան պարգեւին, որ ձեզի պիտի փրկուի՝ երբ Յիսուս Քրիստոս յայտնուի*» (13 հմբ): Սա կը նշանակէ, դարձի գալ կ'ենթադրէ միտքը, մտածելակերպը փոխել: Պօղոս Առաքեալ մէկ այլ ուրիշ կերպ պիտի ըսէ. «*Վերանորոգուեցէք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով*» (Եփես 4:23): Այնպէս ինչպէս որ էր պարագան անցեալին, Ելից գիրքին մէջ նշուած, թէ Իսրայէլի ժողովուրդը ինչպէս պիտի ուրէր Զարկական գառնուկը. «*Ձեր գօտիները մէջքերնիդ ու ձեր կօշիկները ոտքերնիդ եւ ձեր ցուպերը ձեռքերնիդ ըլլալով՝ զանկաւ արտորնօք ուրէք*» (Ելից 12:11): Ինչպիսի պատրաստ մտքի մը մասին է խօսքը, որ Պետրոս Առաքեալ կը ներկայացնէ, պատրաստ ըլլալու: Երկրորդ, որպէս Աստուծոյ հնազանդ գաւակներ, մի առաջնորդուիք անցեալի ցանկութիւններով, որոնցմով կ'ապրէիք, երբ փրկուիք Քրիստոսը չէիք ճանչնար:

Ուրեմն, «Ինչպէս որ ձեզ կանչողը՝ Աստուած սուրբ է, դուք ալ սուրբ եղէք» (16 հմբ): Այս էր, ու այս է Աստուծոյ հրաւերը փրուած մարդուն, նմանելու Իրեն: Քրիստոս պիտի ըսէ կապարեալ եղէք ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կապարեալ է: Գթած եղէք ինչպէս ձեր երկնաւոր Հայրը գթած է: Ուրեմն, սուրբ եղէք ինչպէս որ ձեզ կանչողը Աստուած Ինք սուրբ է: Սրբութեան կոչումը փրուած է բոլոր անոնց որոնք կ'ուզեն հնազանդ գաւակները ըլլալ Աստուծոյ: Սրբութեան կոչումը միայն յարուկ չէ քանի մը հոգիներու: Սրբութեան կոչումը յարուկ չէ չնաշխարհիկ մարդոց, որոնք լեռներու կամ քարայրներու մէջ կը ճգնին: Սրբութեան կոչումը փրուեցաւ բոլոր անոնց որոնք կ'ուզեն ժառանգել Աստուծոյ Արքայութիւնը: Իսկ ի՞նչ կը նշանակէ սուրբ ըլլալ: Սուրբ բառին ստուգաբանութիւնը կու գայ ցոյց տալու, թէ սրբել կը նշանակէ մաքրել, զտել, անջատել, զարթել, եւ փրամադրելի դարձնել: Այս պարագային ալ երբ Աստուած սրբութեան կոչումը կու տայ մարդուն, եւ այս պարագային Իր ժողովուրդին անով կ'ուզէ տրվեցնել, թէ ինչպէս Աստուծոյ ժողովուրդը սրբուած մաքրուած Քրիստոսի արիւնով, ինքզինք զտելու, զարթելու եւ անջատելու միջավայրէն, չխառնուելու անոր հետ, եւ առաւել եւս ինքզինք փրամադրելու դարձնելու Աստուծոյ կամքին ու Անոր ծառայութեան:

✠ ✠ ✠